ԱՆԴՐԱՖԿԱՀ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1924 Թ. ՍՍՀՄ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆԸ

ՌԱՉՄԻԿ ՂԵՎՈՆԴՅԱՆ

Մարդկության պատմության մեջ պրոլետարիատի դիկտատուրայի աշխարհում առաջին բազմազգ պետության՝ ՍՍՀ Միության, ծնունդը պահանջում էր պետական կառուցվածքի սահմանադրական ձևակերպում։

ՍՍՀ Միության կազմավորումից անմիջապես հետո, 1923 թ. հունվարի 10-ին, ՍՍՀՄ Կենտգործկոմի նախագահության առաջին նիստում ստեղծվեցին ՍՍՀՄ Սահմանադրության մշակման վեց հանձնաժողովներ, Սահմանադրություն, որը պետք է արտահայտեր բոլոր ազգությունների շահերը։

Վ. Ի. Լենինն ուշադրությամբ հետևում էր սահմանադրական հանձնաժողովների աշխատանքին և ժամանակին արժեքավոր ցուցումներ էր տալիս մշակվող հարցերի վերաբերյալ։ Վճռական նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի «Ազգությունների կամ «ավտոնոմիզացիայի» հարցի շուրջը» նամակը, որտեղ խորապես հիմնավորված էին պրոլետարական ինտերնացիոնալիզմի և սոցիալիստական դեմոկրատիզմի սկզբունքները։ Դատապարտելով մեծապետական շովինիզմը, Վ. Ի. Լենինը նշում էր, որ «հարկավոր է մտցնել խստագույն կանոններ ազգային լեզուն մեր միության մեջ մտնող այլազգի հանրապետություններում գործածելու նկատմամբ և առանձնապես խնամքով ստուգել այդ կանոնները»[1]։

ՍՍՀՄ Սահմանադրության նախագիծը մշակելիս մեծ նշանակություն ունեցավ ազգային հարցի վերաբերյալ ՌԿ(բ)Կ XII համագումարի որոշումը, որը կուսակցությանը պայքարի մոբիլիզացրեց ինչպես մեծապետական շովինիզմի, որն այն ժամանակ գլխավոր վտանգն էր ներկայացնում, այնպես էլ տեղական ազգայնական թեքումների դեմ։ Հաշվի առնելով ՍՍՀՄ բազմազգ կազմը, ՌԿ(բ)Կ XII համագումարը կուսակցության բոլոր անդամներին հանձնարարեց հասնել այն բանին, որպեսզի Միության բարձրագույն մարմինների սիստեմում հիմնվի առանց բացառության բոլոր ազգային հանրապետությունների ներկայացուցչության հատուկ օրգան, հնարավորին չափով հաշվի առնելով այդ հանրապետությունների կազմի մեջ մտնող բոլոր ազգությունների ներկայացուցչությունը[2]։

ՍՍՀՄ Սահմանադրության նախագծի մշակման հանձնաժողովները, որոնք 1923 թ. հունվարի 10-ին ընտրվել էին ՍՍՀՄ ԿԳԿ-ի նախագահության կողմից, իրենց աշխատանքն ավարտեցին 1923 թ. ապրիլին։ 1923 թ. ապրիլի 27-ին ՍՍՀՄ ԿԳԿ-ի նախագահությունը, քննարկելով հանձնաժողովների նյութերը, որոշեց միութենական բոլոր ԿԳԿ-ների ներկայացուցիչներից ստեղ-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 36, էջ 705։

2 «ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում», մաս II, Երևան, 1954, էջ 870—970։

ծել նոր, ընդլայնված հանձնաժողով, որին և հանձնել նախկին հանձնաժողովների բոլոր նյութերը։ ՍՍՀՄ Սահմանադրության մշակման հանձնաժողովների կազմի մեջ ներգրավվեցին 10 նոր անդամներ, հետևյալ հարաբերությամբ. ՌՍՖՍՀ-ից՝ 4, ՈՒկրՍՍՀ-ից՝ 2, ԲՍՍՀ-ից՝ 2, ԱնդրՍՖՍՀ-ից՝ 2։ ՍՍՀՄ ԿԳԿ-ի քարտուղարությանը հանձնարարվեց սահմանադրական հանձնաժողովների աշխատանքներին վերաբերող բոլոր նյութերը ուղարկել միութենական հանրապետությունների բոլոր ԿԳԿ-ներին, որոնց առաջարկվեց 1923 թ. մայիսի 20-ից ոչ ուշ ներկայացնել իրենց նկատառումները հանձնաժողովների նյութերի վերաբերյալ։ Բացի այդ, ՍՍՀՄ ԿԳԿ-ի քարտուղարությանը հանձնարարվեց միջոցներ ձեռնարկել Ի. Վ. Ստալինից ստանալու այն բոլոր նյութերը, որոնք վերաբերում էին ՍՍՀ Միության ԿԳԿ-ին առընթեր երկրորդ պալատի ստեղծմանը[3]։

Սահմանադրական հանձնաժողովի աշխատանքի համար մեծ նշանակություն ունեցավ ազգային հանրապետությունների և մարզերի պատասխանատու աշխատողների հետ ՌԿ(բ)Կ Կենտկոմի 4-րդ խորհրդակցության 1923 թ. հունիսի 12-ի որոշումը։ Խորհրդակցությունը որոշում ընդունեց Միության ԿԳԿ-ի երկրորդ պալատի հիմնման և ՍՍՀՄ ժողկոմատների կազմակերպման հետ կապված հարցերի վերաբերյալ։ Երկրորդ պալատը պետք է կազմվեր ինքնավար և անկախ հանրապետությունների ներկայացուցիչներից (յուրաքանչյուրից չորսական հոգի) և ազգային մարզերի ներկայացուցիչներից (յուրաքանչյուրից մեկական հոգի)։ Որոշվեց առաջին պալատն անվանել Միության սովետ, իսկ երկրորդը՝ Ազգությունների սովետ։ Ենթադրվում էր սահմանել առաջին և երկրորդ պալատների իրավունքների հավասարություն. նրանցից յուրաքանչյուրին վերապահելով օրենսդրական իրավունքի նախաձեռնություն և պահպանելով այնպիսի պայման, որի դեպքում այդ պալատների քննարկմանը դրված ոչ մի օրինագիծ չէր կարող օրենքի ուժ ստանալ առանց երկու պալատների համաձայնության, որոնք քվեարկում էին առանձին-առանձին։ ՍՍՀՄ ԿԳԿ-ի նախագահությունը պետք է ընտրվեր երկու պալատների կողմից, պահպանելով ազգությունների ներկայացուցչությունը, իսկ ժողկոմատների կազմակերպումը ենթադրվում էր այնպես, որպեսզի դրանց մեջ մտնեին ազգային հանրապետությունների ներկայացուցիչները[4]։

Սահմանադրական հանձնաժողովը, հիմք ընդունելով «ՍՍՀՄ կազմավորման մասին Դեկլարացիան ու Պայմանագիրը» և հաշվի առնելով Վ. Ի. Լենինի բոլոր ցուցումները, ազգային հարցի վերաբերյալ ՌԿ(բ)Կ XII համագումարի բանաձևը, ինչպես նաև ՌԿ(բ)Կ 4-րդ խորհրդակցության որոշումը, կազմեց ՍՍՀ Միության Սահմանադրության նախագիծը։

ՍՍՀՄ Սահմանադրության նախագիծն ուղարկվեց բոլոր միութենական հանրապետությունները, որտեղ սահմանադրական հանձնաժողովները նախագծի մեջ մտցրեցին կյանքի կողմից թելադրվող ուղղումներ, լրացումներ և փոփոխություններ։

Այսպես, Ադրբեջանական ՍՍՀ-ում ՍՍՀՄ Սահմանադրության նախագիծը քննարկող հանձնաժողովը, որի կազմի մեջ էին Ս. Ազամալիոզլին, Ա. Կարաևը, Գ. Մուսաբեկովը և ուրիշներ, 1923 թ. մայիսի 11-ին որոշեց նախագծի

---

3 Վրացական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՎՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ), ֆ. 607, ց. 1, գ. 3, թ. 12։

4 «Образование и развитие СССР», сборник документов, М., 1973, стр. 285—286.

մեջ մտցնել հետևյալ ուղղումներն ու լրացումները. 1) 1-ին գլ. 1-ին հոդ. § «գ»-ում, որտեղ ասվում էր, որ ՍՍՀ Միության կողմից սահմանվում է, թե արդյունաբերությունից ինչն է դասվում ՍՍՀՄ-ի տնօրինությանը որպես ընդհանուր միութենական, ցանկություն էր հայտնվել, որպեսզի տվյալ հարցը Աղգությունների պալատի միջոցով նախապես համաձայնեցվեր այն հանրապետությունների հետ, որոնց տարածքում է գտնվում այդ արդյունաբերությունը։ 2) 1-ին գլ. 1-ին հոդ. § «լ»-ի առթիվ, որտեղ ասվում էր, որ ՍՍՀ Միությունը հաստատում է ՍՍՀՄ-ի բյուջեն, որի կազմի մեջ մտնում են նաև միութենական հանրապետությունների բյուջեները, ինչպես նաև սահմանում է հարկերն ու եկամուտները, հանձնաժողովը առաջարկում է, որպեսզի հանրապետական և տեղական հարկերի սահմանումը և հարկային օրենքների հրապարակումը համապատասխանեցվեր տեղական պայմաններին։ 3) 1-ին գլ. 1-ին հոդ. § «ն»-ի համաձայն, ՍՍՀ Միությունը անհրաժեշտության դեպքում լուծում էր միջհանրապետական վերաբնակեցումների հարցը։ Հանձնաժողովը արձանագրության մեջ մտցրեց Ադր. ՍՍՀ-ի ցանկությունը, որպեսզի վերաբնակեցումները կատարվեին հանրապետության համաձայնությամբ։ 4) Նախագծի 34-րդ հոդվածի վերաբերյալ արձանագրության մեջ մտցվեց հանձնաժողովի կարծիքը, ըստ որի հանրապետություններին պետք է վերապահվեր մասնավոր ներման, ինչպես նաև Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելու իրավունքը[5]։

1923 թ. մայիսի 23-ի նիստում հանձնաժողովը նախագծի մեջ մտցրեց լրացուցիչ ուղղումներ և փոփոխություններ։ Հանձնաժողովը գտավ, որ պարենավորման ժողովրդական կոմիսարիատի ստեղծման անհրաժեշտությունը չի զգացվում և այդ պատճառով այն չպետք է ստեղծել, իսկ հանրապետություններում ժողկոմատների լիազորներին նշանակել ՍՍՀՄ ժողկոմատի և հանրապետությունների ԿԳԿ-ների ու Ժողկոմսովետների փոխադարձ համաձայնությամբ, առավելապես տեղի ազգությունների աշխատողներից։ Հողագործության միութենական կոմիտեի մասին կանոնադրությունը սկզբունքորեն ընդունվեց, ավելացնելով լրացուցիչ կետեր, որոնց նպատակն էր ուժեղացնել կոմիտեի մասնակցությունը գյուղատնտեսությանը ցույց տրվող նյութական օգնության գործում։ Հանձնաժողովն անհրաժեշտ համարեց, որպեսզի օրենքների և դիրեկտիվների բոլոր հիմնական նախագծերը, որոնք ենթակա են միութենական ԿԳԿ-ի ու Սովետների միութենական համագումարի հաստատմանը, նախօրոք ուղարկվեին տեղերը՝ քննարկման և հանրապետությունների ԿԳԿ-ների կողմից եզրակացություն տալու համար[6]։

1923 թ. մայիսի 14-ին ԱդրԿԳԿ-ի նախագահության կոմֆրակցիայի, Ժողկոմսովետի, Կենտկոմի և Անդրկոմկուսի Բաքվի կոմիտեի միացյալ նիստը որոշեց ՍՍՀՄ Սահմանադրության նախագծի առթիվ սահմանադրական հանձնաժողովների առաջարկած ուղղումները, լրացումները և փոփոխությունները հաստատել հետևյալ փոփոխություններով՝ ա) հանրապետություններում պարենավորման ժողովրդական կոմիսարիատը թողնել որպես ինք-

---

5 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ադրբեջանական մասնաճյուղի (այսուհետև՝ Մ.Լ. ադրբեջանական մասնաճյուղի) արխիվ, ֆ. 1, ց. 74, գ. 132, թ. 8 և ՎՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 607, ց. 1, դ. 3, թ. 76։

6 ՎՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 607, ց. 1, գ. 3, թ. 75։

նուրույն և դիրեկտիվ կոմիսարիատ (6-րդ գլ. 47-րդ հոդ.). բ) հանրապետությունների պետքաղվարչությունները լիովին ենթարկվում են տեղական իշխանություններին, իրենց աշխատանքը կոորդինացնելով ըստ ՍՍՀՄ պետքաղվարչության ցուցումների (9-րդ գլ. 66-րդ հոդ.). գ) տեղական իշխանությանը վերաբերող և հանրապետությունների շահերը շոշափող բոլոր դիրեկտիվները և կարգադրությունները իրագործել բացառապես նրանց ԿԳԿ-ների և ժողկոմսովետների միջոցով[7]։

1923 թ. մայիսի 18-ին Հայկական ՍՍՀ ԿԳԿ-ի նախագահությունը քննելով ՍՍՀՄ Սահմանադրության նախագիծը քննարկող հանձնաժողովի ստեղծման հարցը, ԿԳԿ-ի, ժողկոմսովետի և ՍՍՀՄ ժողկոմատների միավորման կանոնադրությունները, որոշում ընդունեց սահմանադրական հանձնաժողով կազմակերպելու վերաբերյալ, որի կազմի մեջ մտան Ս. Համբարձումյանը, Ս. Լուկաշինը (Սրապիոնյանը), Ա. Հովհաննիսյանը, Դ. Շահվերդյանը և Դ. Տեր-Մինասյանը։ Սահմանադրական հանձնաժողովի նախագահ ընտրվեց Ս. Համբարձումյանը[8]։

1923 թ. հունիսի 24-ին Հայաստանի ԿԳԿ-ի նախագահությունը որոշեց գումարել ԿԳԿ-ի III սեսիան և մյուս հարցերի հետ միասին սեսիայի օրակարգի մեջ մտցրեց նաև ԿԳԿ-ի նախագահության զեկուցումը «Միության Սահմանադրության մասին»[9]։

Հայաստանի ԿԳԿ-ի III սեսիայում, որը տեղի ունեցավ 1923 թ. սեպտեմբերի 21-ին, ընդունվեց հետևյալ որոշումը՝ «ՍՍՀՄ Սահմանադրությունն ընդունել և ներկայացնել Հայաստանի Սովետների III համագումարի հաստատմանը»[10]։

ՀՍՍՀ Սովետների III համագումարում (1923 թ. դեկտեմբեր) ՍՍՀՄ Սահմանադրության վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Ս. Համբարձումյանը։ Նա մանրամասն կանգ առավ ՍՍՀՄ իրավազորության և ՍՍՀՄ ԿԳԿ-ի կազմակերպման հարցերի վրա։ Խոսելով ՍՍՀՄ տնօրինությանը ենթակա հարցերի մասին, նա նշեց. «Չի կարելի պատրանքներով տարվել, որ բուրժուական պետությունները, երեք տարի շարունակվող քաղաքացիական կռիվներում պարտություն կրելուց հետո, կարող են հաշտվել խորհրդային քաղաքական և տնտեսական կարգերի հետ։ Պայքարը շարունակվում է, և խորհրդային երկրները պիտի հանդես գան մի ռազմական և տնտեսական ֆրոնտով կապիտալիստական խոշոր պետությունների հանդեպ։ Այստեղ հարկավոր է մի ղեկավարություն և մի գործող կենտրոնացած ապարատ։ Սրանից է, որ արտաքին առևտրի մենաշնորհի իրագործումը, ռազմական ուժերի կազմակերպումը, քաղաքական արտաքին հարաբերությունները, դիվանագիտությունը, պատերազմ հայտարարելը և խաղաղություն կնքելը թողնված է ՍԽՀ Միության իրավասությանը»[11]։

Այնուհետև Ս. Համբարձումյանը մանրամասնորեն լուսաբանեց ՍՍՀՄ ԿԳԿ-ի երկպալատ սիստեմի կազմավորման պատճառը, որպես ազգությունը-

---

7 Նույն տեղում, թ. 74։
8 ՀՍՍՀ ՀՀՍԵՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 55, ց. 10։
9 Նույն տեղում, թ. 30։
10 Մշի արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 108, թ. 7։
11 «ՀՍԽՀ խորհուրդների երրորդ համագումարը», Երևան, 1926, էջ 205։

ների շահերի արտահայտում. «Այժմս մի բարձրագույն մարմնի տեղ,— ասաց նա,— գոյություն ունեն հավասար իրավունքներով օժտված և միևնույն իրավասությամբ երկու բարձրագույն մարմիններ—Միության խորհուրդը և Ազգությունների խորհուրդը: Փոփոխություններ տեղի են ունեցել նաև կազմի վերաբերյալ։ Այս երկու մարմիններն առաջ են եկել մի խոշոր հարցից, որ դրված էր միութենական մասշտաբով—դա ազգությունների հարցն է. մեր արտասահմանի թշնամիները պնդում էին, որ Միության կազմակերպությունը մի իմաստ ունի, որ իբր թե հին, ցարական վերաբերմունքը դեպի մանր ազգությունները՝ խորհրդային իշխանության կողմից վերականգնվում է. նրանք կարծում էին, թե խորհրդային Հանրապետությունների Միությունը կազմվում է այն նպատակով, որ կլանվեն մանր ազգությունների շահերը։ Ազգությունների խորհրդի կազմակերպումն ահա մի խոշոր ապացույց դարձավ խորհրդային իշխանության մանր ազգությունների և նրանց հանրապետությունների հանդեպ ունեցած անկեղծ քաղաքականությանը, այն հանրապետությունների, որոնք հեղափոխության ընթացքում կազմվել են նախկին ցարական միապետության սահմաններում»[12]։

ՀՍՍՀ Սովետների III համագումարի պատգամավորները միաձայն հավանություն տվեցին ՍՍՀ Միության Սահմանադրությանը։

1923 թ. հունիսի 18-ին Վրաստանի կոմունիստական կուսակցության II համագումարն ազգային հարցի վերաբերյալ ընդունած բանաձևում ճիշտ համարեց կուսակցության գիծը Անդրկովկասում ազգային հարցի լուծման բնագավառում և նպատակահարմար գտավ Անդրֆեդերացիայի միջոցով ՍՍՀ Միության մեջ Վրացական ՍՍՀ-ի մտնելու վերաբերյալ որոշումը։ Դրա հետ մեկտեղ համագումարը, ելնելով անմիջականորեն կամ իրենց ֆեդերատիվ կազմավորման միջոցով ՍՍՀ Միության մեջ մտնող բոլոր ազգությունների համար հավասարության սկզբունքով ներկայացուցչություն ապահովելու անհրաժեշտությունից, հավանություն տվեց միութենական զուգահեռ մարմնի ստեղծմանն ի դեմս ՍՍՀՄ ԿԳԿ-ի երկրորդ պալատի, որտեղ ազգությունները կներկայացվեն հավասարության սկզբունքով։ Դրա հետ մեկտեղ Վրաստանի կոմունիստական կուսակցության համագումարը որոշեց, որ Վրաստանի ներկայացուցչության հետ միասին երկրորդ պալատում պետք է ներկայացվեն նաև Աբխազիայի, Աջարիայի ու Հարավ-Օսեթիայի ինքնավար մարզի մեկական ներկայացուցիչներ[13]։

1923 թ. մարտի 18-ին Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների II համագումարը քննարկեց «Ազգային մոմենտները սովետական և կուսակցական շինարարության մեջ» հարցը և ընդունված բանաձևում անհրաժեշտ համարեց Միութենական ԿԳԿ-ի հետ մեկտեղ բոլոր ազգերի հավասար ներկայացուցչության հիման վրա կազմակերպել երկրորդ պալատը, որը ճիշտ կարտացոլեր առանձին ազգությունների առանձնահատուկ կարիքներն ու պահանջները[14]։

ԱնդրՍՖՍՀ-ի ընտրված սահմանադրական հանձնաժողովը, քննարկելով ՍՍՀՄ Սահմանադրության նախագիծը, 1923 թ. հունիսի 2-ին որոշեց մաս-

---

12 Նույն տեղում, էջ 202։

13 «Заря Востока», 20.III.1923.

14 «Образование СССР», сборник док-ов, М., 1973, стр. 273—274.

նակի ուղղումներ մտցնել նախագծի մեջ։ Այսպես, 1-ին գլ. 1-ին հոդ. «զ» կետից, որտեղ ասվում էր, որ Միության ամբողջ ժողովրդական տնտեսության հիմքերի և ընդհանուր պլանի սահմանումը, արդյունաբերության ճյուղերի և ընդհանուր միութենական նշանակություն ունեցող առանձին արդյունաբերական ձեռնարկությունների սահմանումը ենթակա է ՍՍՀՄ տնօրինությանը, առաջարկվում էր հանել «արդյունաբերության ճյուղերի և ընդհանուր միութենական նշանակություն ունեցող առանձին արդյունաբերական ձեռնարկությունների սահմանումը» բառերը, որպեսզի Միության բարձրագույն մարմիններն իրավունք չունենային սահմանելու, թե արդյունաբերությունից ի՞նչն է պատկանում ՍՍՀՄ-ի տնօրինությանը, որպես ընդհանուր միութենական։ Դա բացահայտ սխալ էր, քանի որ հանրապետությունների պաշտպանության և էկոնոմիկայի զարգացման շահերը պահանջում էին ստեղծել ընդհանուր միութենական ենթակայության արդյունաբերության մի շարք ճյուղեր։ Նույն տեղի «ա» կետում առաջարկվում էր, որպեսզի Միության բարձրագույն մարմինները, սահմանելով հողաշինարարության և հողօգտագործման ընդհանուր սկզբունքները,՝ սահմանեին նաև ընդերքի, անտառների ու ջրերի օգտագործման ընդհանուր սկզբունքները։ Բացի այդ, 6-րդ գլ. § 47-ի վերաբերյալ հանձնաժողովը ցանկություն հայտնեց, որպեսզի բանգյուղտեսչության ժողկոմատը, համամիութենական ժողտնտխորհը, աշխատանքի ժողկոմատը, պարենավորման ժողկոմատը և ֆինժողկոմատը հանդիսանային դիրեկտիվ կոմիսարիատներ[15]։

1923 թ. հունիսի 3-ին ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի նախագահությունը նախագահության անդամներ Ա. Մյասնիկյանի, Գ. Օրջոնիկիձեի, Մ. Ցխակայայի և Շ. Էլիավայի մասնակցությամբ, քննարկելով Ա. Մյասնիկյանի զեկուցումը ՍՍՀՄ Սահմանադրության նախագծի վերաբերյալ, որոշեց՝ 1. հիմք ընդունել Հանրապետությունների Միության Սահմանադրության նախագիծը։ 2. Ընդունել Անդր. ԿԳԿ-ի սահմանադրական հանձնաժողովի կողմից առաջարկված ուղղումները Հանրապետությունների Միության Սահմանադրության նախագծի վերաբերյալ։ 3. Ուղղումների պաշտպանությունը Մոսկվայում հանձնարարել Անդրկովկասի պատվիրակությանը։ 4. Սահմանադրական հանձնաժողովին հանձնարարել Սահմանադրության վերաբերյալ հետագա ուղղումները, որոնք վերաբերում են առանձին ժողկոմատների կառուցվածքին, լրացուցիչ կերպով ուղարկել Մոսկվա[16]։

1923 թ. հունիսի 8-ին Անդր. ԿԳԿ-ի և Վրաստանի ԿԳԿ-ի ՍՍՀՄ Սահմանադրության նախագիծը քննարկող հանձնաժողովների միացյալ նիստը, քննության առնելով «ՍՍՀՄ Ժողկոմսովետի մասին, ՍՍՀՄ աշխատանքի և պաշտպանության խորհրդի մասին և ՍՍՀՄ ժողկոմատների մասին Կանոնադրությունների» նախագծերը, որոշեց գրանցում մտցնել մի շարք փոփոխություններ և լրացումներ։ «ՍՍՀՄ աշխատանքի և պաշտպանության խորհրդի կանոնադրության» § 2-ի «զ» կետի համաձայն, ՍՍՀ Միության աշխատանքի և պաշտպանության խորհուրդն իրավունք ուներ չեղյալ հայտարարելու հանրապետությունների աշխատանքի և պաշտպանության խորհուրդնե-

15 ՎՍՍՀ ՀՀՍԵՊԿԱ, ֆ. 607, ց. 1, գ. 3, թ. 13։

16 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի վրացական մասնաճյուղի (այսուհետև՝ ՄԼԻ վրացական մասնաճյուղի) արխիվ, ֆ. 13, ց. 1, գ. 185, թ. 327։

րի որոշումները։ Հանձնաժողովը նշված կետում ուղղում մտցրեց, որի համաձայն ՍՍՀՄ աշխատանքի և պաշտպանության խորհուրդը իրավունք ունենար հանրապետությունների այդ որոշումները չեղյալ համարելու այն դեպքում, եթե դրանք կհակասեն միութենական օրենսդրությանը։ ՍՍՀՄ ժողկոմատների ընդհանուր կանոնադրության 2-րդ գլ. 23-րդ հոդվածը առաջարկվում էր փոխել այնպես, որպեսզի Անդրկովկասի միավորված կոմիսարիատների ժողկոմները (լիազորները) նշանակվեն ՍՍՀՄ ԿԳԿ-ի նախագահության կողմից՝ ընդհանուր միութենական համապատասխան ժողկոմի համաձայնությամբ[17]։

ՍՍՀՄ Սահմանադրության նախագծի մշակման և քննարկման ժամանակաշրջանում Մդիվանու նացիոնալ-ուկլոնիստների խումբը կրկին շարունակում էր իր հակակուսակցական ելույթները, ձգտելով հասնել այն բանին, որ Անդրֆեդերացիան վերացվի և Վրաստանը ինքնուրույն կերպով մտնի ՍՍՀ Միության մեջ։ Անդրերկրկոմը, դատապարտելով Մդիվանու գիծը, ստիպված էր 1923 թ. հունիսի 10-ին դիմելու ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյին, խնդրելով ՍՍՀՄ ԿԳԿ-ի սահմանադրական հանձնաժողովի կազմից հանել Մդիվանուն, նրա փոխարեն նշանակել Գ. Ստուրուային[18]։ Մդիվանին հանվեց ՍՍՀՄ Սահմանադրության նախագիծը մշակող ՄՍՀ Միության ԿԳԿ-ի հանձնաժողովի կազմից և նրա փոխարեն նշանակվեց Գ. Ստուրուան։

ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմը, Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կոմկուսակցությունների Կենտկոմները, Անդրկովկասում ապրող բոլոր ժողովուրդները վճռականորեն դատապարտեցին նացիոնալ-ուկլոնիստների ամեն տեսակի ելույթները։ ՍՍՀ Միության Սահմանադրության նախագիծը, որը հավանության էր արժանացել երեք հանրապետությունների Կենտգործկոմների կողմից, դրվեց Անդրկովկասի ԿԳԿ-ի II սեսիայի քննարկմանը։

Անդրկովկասի Կենտգործկոմի II սեսիան բացվեց 1923 թ. հունիսի 29-ին, Թբիլիսիում։ Սեսիայում ՍՍՀ Միության Սահմանադրության նախագիծը քննարկելու համար ընտրված սահմանադրական հանձնաժողովների աշխատանքների արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ Մ. Հուսեյնովը։ Զեկուցողը սեսիայի պատգամավորներին հիշեցրեց Սահմանադրության նախագծի քննարկման կարգը և նշեց նախորդ նախագծերի համեմատ եղած նորամուծությունները[19]։ «Նախքան անցնելն ըստ հոդվածների Սահմանադրության ընթերցմանը և այն փոփոխություններին ու լրացումներին, որոնք արվել են,— իր ելույթում ասաց Մ. Հուսեյնովը,— պետք է կանգ առնեմ մի հարցի վրա, որը երկար ժամանակ վիճաբանության առարկա էր դարձել ինչպես մամուլում, այնպես էլ հանձնաժողովների մեջ մտնող ընկերների միջև։ Այդ հարցը երկրորդ պալատի ստեղծման մասին է։ Առաջարկվել էր, որպեսզի ԿԳԿ-ի հետ միասին գոյություն ունենար երկրորդ պալատը, երկրորդ գերագույն մարմինը՝ կազմված առանձին հանրապետությունների ներկայացուցիչներից։ Երկրորդ պալատը կազմված կլինի այն ներկայացուցիչներից, որոնք ընտրվում են առանձին հանրապետությունների համագումարներում. յուրաքանչյուր հանրապետություն Երկրորդ պալատ է ուղարկում չորս ներկա-

17 ՎՍՍՀ ՀԱՍԵՊԿԱ, ֆ. 607, ց. 1, գ. 3, թ. 14։

18 Մլի վրացական մասնաճյուղի արխիվ, ֆ. 13, ց. 1, գ. 135, թ. 398։

19 «Заря Востока», 30.VI.1923.

յացուցիչ, իսկ ինքնավար մարզերը՝ մեկական։ Երկրորդ պալատը կոչվում է «Ազգերի սովետ»։ Առաջին պալատը կկոչվի «Միությունների սովետ»։ Օրինագծերը կանցնեն երկու պալատներով»[20]։

Այնուհետև Մ. Հուսեյնովը կարդաց ՍՍՀ Միության Սահմանադրության նախագծի վերաբերյալ սահմանադրական հանձնաժողովների առաջարկած ուղղումները, փոփոխությունները և լրացումները։ Սահմանադրական հանձնաժողովի անունից նա ուղղում առաջարկեց առաջին գլխի «մ» կետի վերաբերյալ այն առումով, որպեսզի միութենական իշխանությունները հողօգտագործումը և ընդերքի օգտագործումը կարգավորեին ոչ թե մանրամասնություններով, այլ սահմանեին միայն ընդհանուր սկզբունքը. իսկ ինչ վերաբերում է առանձին մոմենտներին, առանձին մանրամասնություններին, ապա դա թողնեին տեղական իշխանություններին։ Այնուհետև նա երկրորդ գլխի 5-րդ կետի վերաբերյալ ուղղում առաջարկեց այն մասին, որ Սովետների միութենական համագումարի համար պատգամավորներն ընտրվեին ոչ թե նահանգներից, այլ միութենական հանրապետությունների համագումարների կողմից։ Այլ կերպ ասած՝ միութենական համագումարի համար Անդրկովկասից պատգամավորներ պետք է ընտրվեին Սովետների Անդրկովկասի համագումարում, այլ ոչ թե Անդրկովկասի հանրապետությունների համագումարների կողմից։ Հաջորդ ուղղումները վերաբերում էին երրորդ գլխի 12-րդ կետին և հինգերորդ գլխի 38-րդ կետին։ Այդ ուղղումների իմաստն այն էր, որ օրինագծերը քննարկվեին և հաստատվեին ՍՍՀ Միության երկու պալատների՝ Միության սովետի և Ազգությունների սովետի կողմից, և որպեսզի միութենական դատարանի որոշումները համարվեին վերջնական[21]։

Այնուհետև Մ. Հուսեյնովը կարդաց սահմանադրական հանձնաժողովի առաջարկություններն այն մասին, որ ՍՍՀ Միության աշխատանքի և պաշտպանության խորհուրդը իրավունք ունենար չեղյալ հայտարարելու աշխատանքի և պաշտպանության առանձին խորհուրդների որոշումներն այն դեպքում, եթե դրանք կհակասեն միութենական օրենսդրությանը միութենական Սահմանադրության բնագավառում։ «ՍՍՀՄ աշխատանքի և պաշտպանության խորհրդի կանոնադրության» երրորդ կետում ասվում էր, որ առանձին հանրապետությունների աշխատանքի և պաշտպանության խորհուրդներն անմիջականորեն ենթարկվում են ՍՍՀ Միության աշխատանքի և պաշտպանության խորհրդին։ Հանձնաժողովը առաջարկում էր այդ կետը փոխել այնպես, որպեսզի հանրապետությունների աշխատանքի և պաշտպանության խորհուրդները ՍՍՀ Միության աշխատանքի և պաշտպանության խորհրդին ենթարկվեին միայն միութենական իրավասության հարցերում։ Ապա Մ. Հուսեյնովը կարդաց հանձնաժողովի առաջարկությունը ռազմական ժողկոմատի, արտաքին գործերի ժողկոմատի, փոստ-հեռագրային ժողկոմատի, ճանապարհների հաղորդակցության ժողկոմատի և արտաքին առևտրի ժողկոմատի լիազորներին ժողկոմներ վերանվանելու մասին։ Ըստ ՍՍՀ Միության Սահմանադրության նախագծի, լիազորները պետք է հանրապետության ժողկոմսովետի մեջ մտնեին խորհրդակցական ձայնի իրավունքով, իսկ եթե լիազորները վերանվանվեին ժողկոմներ, ապա արդեն ժողկոմսովետի մեջ կմտնեին վճռական

20 ՎՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 607, ց. 1, գ. 29, թ. 36—38։

21 Նույն տեղում, թ. 40—41։

ձայնի իրավունքով։ Առաջարկվել էր հանել 19-րդ հոդվածի «ե» կետը, որտեղ ասվում էր, որ միավորված ժողովրդական կոմիսարիատներն իրավունք ունեն քննության ենթարկելու հաստիքները, բացելու միութենական հանրապետությունների նոր բաժիններ։ Իսկ Սահմանադրության նախագծի 23-րդ հոդվածի մեջ առաջարկվեց այնպիսի ուղղում մտցնել, որպեսզի Անդրկովկասի ժողկոմները (միավորված կոմիսարիատների լիազորները) ՍՍՀՄ ԿԳԿ-ի նախագահության կողմից նշանակվեին միայն միութենական համապատասխան ժողկոմատի համաձայնությամբ[22]։

Սեսիան հավանություն տվեց ՍՍՀ Միության Սահմանադրության նախագծի մեջ մտնող ուղղումների, լրացումների և փոփոխությունների վերաբերյալ բոլոր առաջարկություններին և միաձայն ընդունեց դրանք։

1923 թ. հուլիսի 6-ին տեղի ունեցավ ՍՍՀ Միության Կենտգործկոմի երկրորդ սեսիան, որը, ըստ ՍՍՀ Միության Սահմանադրության վերաբերյալ Ա. Ենուկիձեի զեկուցման, հավանություն տվեց Սահմանադրությանը և որոշեց՝ հաստատել ՍՍՀ Միության Սահմանադրությունը և անհապաղ մտցնել գործողության մեջ, ինչպես նաև սեսիայի ընդունած Սահմանադրության տեքստը դնել ՍՍՀ Միության Սովետների II համագումարի վերջնական հաստատմանը[23]։

ՍՍՀ Միության Սահմանադրությունը վերջնականորեն հաստատվեց ՍՍՀ Միության Սովետների II համագումարում, 1924 թ. հունվարի 31-ին։

1924 թ. ՍՍՀ Միության Սահմանադրությամբ հանրապետությունների իրավահավասարության սկզբունքը լիովին պահպանվեց։ Նրանում իր արտացոլումը գտավ Լենինյան գիծը, որն ուղղված էր ինչպես ավելորդ կենտրոնացման, այնպես էլ միութենական պետության միասնության թուլացմանը նպատակամղվող տենդենցների դեմ։

Յուրաքանչյուր հանրապետության վերապահվում էր Միությունից ազատորեն դուրս գալու իրավունք, հանրապետությունների տարածքը հանդիսանում էր անձեռնմխելի, և փոփոխություններ կարող էին տեղի ունենալ միայն բուն իսկ հանրապետության համաձայնությամբ։ Հանրապետության քաղաքացիները միաժամանակ հանդիսանում էին ՍՍՀ Միության քաղաքացիներ։

ՍՍՀ Միության կազմավորումը, 1924 թ. ՍՍՀՄ Սահմանադրության մշակումն ու ընդունումը մեծագույն իրադարձություններ էին, պրոլետարական ինտերնացիոնալիզմի լենինյան քաղաքականության, սոցիալիստական ժողովուրդների եղբայրական համագործակցության հաղթանակը։

УЧАСТИЕ ЗСФСР В РАЗРАБОТКЕ КОНСТИТУЦИИ СОЮЗА ССР 1924 г.

РАЗМИК ГЕВОНДЯН

Резюме

Проект Конституции СССР был разослан всем союзным республикам для обсуждения и внесения изменений, дополнений и поправок.

---

22 Նույն տեղում, թ. 42—43.

23 «Образование и развитие ССР как союзного государства», сборник законодатель. и др. нормативов, М., 1972, стр. 178.

В закавказских республиках были избраны специальные конституционные комиссии при ЦИК-ах, которые, обсудив проект, внесли в него ряд изменений и дополнений.

Проект Конституции Союза ССР 1924 г. был обсужден и конституционной комиссией при ЦИК-е ЗСФСР, которой также были внесены в проект соответствующие изменения и дополнения.

Все изменения и дополнения, внесенные конституционными комиссиями Азербайджанской, Армянской, Грузинской ССР и ЗСФСР, были направлены в конституционную комиссию ЦИК-а Союза ССР.